



Սիւսանթո

Չարչարանքի երագ

Գարնան ու կոտորումների իրիկուն,
Հոգիս վրէժի շատրուան մըն է նորէն կատաղօրէն դէպի վեր,
Ու տերեւներ յուսահատ հոգիներու նման`
Աւագաններուն պայծառութեանը մէջ ու բոլորին վրայ կ'իջնան,
Անդունդներու մէջէն սրածումներու ձայն,
Ու դէպի հոն օգնութեան աճապարող,
Արդէն մեռնող ճիշէր, արդէն մեռնող կեանքեր:
Ու նորէն այս գիշեր,
Տաճարներուն մէջ անմեղներու դիակներ անհամար,
Ու տանիքիս վրայ տեղատարափ մը երկաթեայ,
Հրդեհներու մրրիկ մը գանկիս տակ,
Ու տեղափոխուող ջուղերուն վրան
Խաշուած նահատակներ կ'երեւան...
Ու անձրեւի ու պատուհասի իրիկունով`
Վերահաս խողխողումներու արհաւիրք մը կը մրրկի...
Պարապ դագաղ մը մի խեղճ ձեռներուս հպումին տակ,
Ու մարմարեայ անսահման սանդուխներու կատարներէն...
Օ՛, օգնութեան եկէ՛ք, գլխատուած մարմիններ դէպի գիս կ'արշաւեն...
Բայց, ո՛վ դուք երեկոներու եւ չարչարանքի եղբայրական հոգիներ,
Փոթորիկին եւ բարբարոսներու խուժումէն առաջ, այս գիշեր,
Յամառօրէն ու արիաբար դուք ձեր ճամբան վճռեցէք...: